ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО
ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ՏՆՕՐԵՆ
ИДЖЕВАНСКИЙ ФИЛИАЛ ФОНДА «ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ»
ДИРЕКТОР
IJEVAN BRANCH OF «YEREVAN STATE UNIVERSITY» FOUNDATION
DIRECTOR

4001 ք. Իջևան, Ուսանողական 3, հեռ.(+374263) 4-00-50: E-mail: ysu_Ib @ysu.am, www.ijevan.ysu.am г. Иджеван, ул. Усанохакан 3, Usanoghakan 3, Ijevan

«23» Օգոստոս 2024թ. / թիվ 01-1/235

ՈՐՈՇՈՒՄ
ԵՊՀ ԻՄ -ԳՀ-ԱՊՁԲ-24/4
(գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին)

Ես, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) տնօրենի պաշտոնակատար Անուշավան Մակարյանս, ուսումնասիրելով ԳՄՊ բաժնի 2024 թվականի օգոստոսի 23-ի զեկուցագիրը՝

ՊԱՐԶԵՑԻ

ԵՊՀ ԻՄ կողմից 2024 թվականի ապրիլի 18-ին Տեղեկագրում (www.gnumner.am) հրապարակվել է ջեռուցման կաթսայի ձեռքբերման հրավեր ԵՊՀ ԻՄ -ԳՀ-ԱՊՁԲ-24/4 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Սույն Ընթացակարգին ընտրված մասնակից է ճանաչվել «Հարություն և Արգիշտի» ՍՊԸ (ՀՎՀՀ՝ 06971797, այսուհետ՝ Ընկերություն): Բացի «Հարություն և Արգիշտի» ՍՊԸ-ից հայտ է ներկայացրել նաև «ԲԻ ԹՈՒ ՋԻ» ՍՊ (ՀՎՀՀ՝ 06971797) և «ՄԱՐԻ ԵՎ ԳԵՎ» ՍՊ (ՀՎՀՀ՝00449502) ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 03 նիստի արձանագրության 5-րդ կետով Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից, իսկ 2024 թվականի մայիսի 22-ին ԵՊՀ ԻՄ և Ընկերության միջև կնքվել է ԵՊՀ ԻՄ-ԳՀ-ԱՊՁԲ-24/4 ծածկագրով և 3 300 000 (երեք միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ ընդհանուր գնով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր): Գնման առարկայի մատակարարման վերջնաժամկետը սահմանվել է պայմանագրի կնքման օրվանից հաշվված 20–րդ օրը (ստացվում է՝ մինչև 2024 թվականի հունիսի 12-ը):

Ընկերությունը Պայմանագրով նախատեսված գնման առարկայի մատակարարումը

մինչ օրս չի իրականացրել: Կնքված Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն գնորդն իրավունք ունի «ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի», իսկ 6.6 կետի համաձայն՝ «Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով»:

Վերոնշյալ հանգամանքների լույսի ներքո, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.1 կետի և «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի պահանջները, ԵՊՀ ԻՄ-ն որոշել է պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Առաջարկել ՀՀ Ֆինանսների նախարարությանը «Հարություն և Արգիշտի» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 06971797) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

2. սույն որոշման օրինակներն ուղարկել «Հարություն և Արգիշտի» ՍՊԸ-ին և Ֆինանսների նախարարություն:

Տնօրենի պաշտոնակատար՝ **Ա.Հ. ՄԱԿԱՐՅԱՆ**